ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«19» 12 2019թ. N 02/12-1/29660-2019

«ՌԵՍԵԹ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍԵՐՎԻՍ»
ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա.ԱՎԱԳՅԱՆԻՆ
ք.Երևան, Ազատության 24/19

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սոցիալական ապահովության ծառայության և «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի հունիսի 18-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ կետերի համաձայն Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն):

Սակայն Կատարողի կողմից Պայմանագրի N 3.1 հավելվածով Պատվիրատուին հանձնված Պայմանագրի արդյունքը չի համապատասխանում Պայմանգրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը՝ ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 10) 52 45 74
info@ssa.am , www.ssa.am

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Պատվիրատուն Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացնի «Յունիբանկ» ԲԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Invalid signature

Հ. Գևորգյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN HARUTYUN 2308830506